

## ՊԱՏՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ\*

### Գայանե Լալայան

**Բանալի բառեր՝** ցեղասպանություն, մտավորական, թուրք, բժիշկ, թատերգություն, աքսորյալ, դեսպան, արդարադատություն, Շարժում, ազատություն, Կոմիտաս Դանիելյան:

*Ցեղասպանության թեմայով գրված յուրաքանչյուր նոր ստեղծագործություն՝ անկախ ժանրից, յուրահատուկ փաստաթուղթ պիտի համարել 20-րդ դարասկզբին մարդկության դեմ նյութված այդ քստմնելի ոճրագործության իրողությունը նորից ու կրկին փաստելու, ապացուցելու համար:  
Կ. Դանիելյան*

Հայ և համաշխարհային գրականությունը բազմիցս է անդրադարձել Հայոց Ցեղասպանության թեմային, երբ պատմության թատերաբեմում, «քաղաքակիրթ, մարդկության աչքի առջև լվկվում ու ոչնչացվում էր մի ամբողջ ազգ, որի հանցանքն այն էր միայն, որ Հայ կոչվելու իրավունքը լուկ իրեն էր վերապահված: Տաղանդավոր արձակագիր Կ. Դանիելյանը ևս անդրադարձ է կատարում դեպի ոչ հեռու պատմական անցյալ և թատերգության բնագավառում ստեղծում իր առաջին երկերից մեկը՝ «Տո լաձ տնավեր» խորագրով, որը, ինչպես արվեստագիտության դոկտոր Լևոն Մուրաֆյանն է նշում ցեղասպանության մասին գրված լավագույն դրամատիկական ստեղծագործություններից է, ուր «կերպարների խորքայնությունը, դիպաշարային գծի շարժուն ընթացքը ներկայացնում են ավարտուն և ամբողջական դրամա... այստեղ քրոնիկոնը բեռնավորվում է ողբերգությանը բնորոշ տարրերով, խոր հոգեբանականությամբ» [1] և վստահորեն նշում, որ ստեղծվել է ինքնահատուկ բեմական գրականություն, որը հարստացնում է մեր պատկերացումները արդի հայ դրամայի մասին և արցախյան թատերգության մեջ ձևավորում նոր հանգրվան: Այդ են վկայում ներկայացման հաջողությունն ու արձագանքները զանգվածային լրատվամիջոցներում: Ահա թե ինչ է գրում Փարիզից հրավիրված տաղանդավոր ռեժիսոր ու դերասան Նարեկ Դուրյանը. «Թեման համահայկական է, հոգեհարազատ ինձ՝ Կարսի և Էրզրումի գաղթականների ժառանգին: Պիեսը սրտիս շատ մոտ էմ ընդունել և նրա բեմադրությամբ ոնց որ նախնիներիս վրեժն առնեն: Սցենարում ոչինչ չեմ փոխել, այնքան լավ է գրված, այնքան քնարական տեքստ է և այնքան լավատեսություն կա մեջը...»: [2]

Դիպաշարը զարգանում է հերոսների բախումների, խոհերի ու մտորումների պատկերումով, կիսամութ գոմում հանգրվանած հայ հասարակության սերուցքը կազմող մտավորականության հոգեբանական դրամայի բացահայտմամբ: Կոմիտաս վարդապետը, մի անկյունում կծկված, չգիտես՝ երգում էր, թե աղոթում էր.

*Քեզ սպասող չմնաց,  
Ուր ես գալի, այ գարուն,  
Գովքդ անող չմնաց,*

\* Հոդվածն ընդունվել է 15.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրդՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

Զուր ես գալի, այ գարուն:

Եվ նրա «Տեր, ողորմյա, Տեր ողորմյա»-ն ավելի էր թանձրացնում խավարն ու մտատանջության տեղիք տալիս: Նա, ում անծի մեջ խտացված է հայ մտավորականության բարձրագույն արտահայտությունը, ում աստվածային ծայնն իշխում է «ամբողջ աշխարհի մարդկանց սրտերի վրա», թուրքի համար ընդամենը «գլավուր, անհավատ» էր, Հայ, որից սարսափում էր խուժանը, ով նրան էր մատուցել ամենամեծ ծառայությունը՝ սկսած տպագրական գործից, թատրոնի հիմնադրումից, պետական գործիչների ու տաղանդավոր պաշտոնյաների տրամադրումից. «Հայերը թուրքիայի ամենակենսունակ տարրն են: Դա թուրքերն իրենք էլ չեն ժխտում, և հենց դա էլ նրանց սարսափեցնում է, որ կարող է հայերը մի օր իշխեն իրենց վրա կամ պահանջեն առանձին պետություն ունենալ: Չ է որ թուրքիայի մի մեծ մասը հայկական հող է: Թուրք փաշան ևս չի ժխտում իր ազգի անձարակությունն ու տգիտությունը՝ «թուրքը որտեղ, գիտությունը որտեղ, դրանք անհամատեղելի են»[3],- կարդում ենք Կ. Դանիելյանի «Մենք մեր սարերն ենք» գրքում:

Գրողը հոգեկան ներքին տառապանքով և միաժամանակ հպարտությամբ է ներկայացնում հայ աքսորյալներին՝ արվեստագետների, խմբագիրների, գրողների, բժիշկների, փաստաբանների, իրավաբանների՝ ընդգծելով նրանց տաղանդի ուժը.

- Ռուբեն Սևակ, 30 տարեկան, ավարտել էմ Լոզանի համալսարանը:

- Դանիել Վարուժան, 31 տարեկան էմ, բարձրագույն կրթություն էմ ստացել Բելգիայում:

- Սիամանթ, 37 տարեկան, սովորել էմ Սորբոնի համալսարանում...

«Ինչպահ, ինչպահ» գաղմացական բացականչություններից հետո, հագիվ գրաձանաչ թուրք չավուշի մեջ գլուխ է բարձրացնում իր ազգին ներհատուկ որակներից մեկը՝ լայրշունքությունը.

- Ոչխարը, որ ոչխար է, էլի հաշիվը պահում են, եթե մեկին գայլերը կամ գողերը տանեն, կիմացվի... Սրանց ոնց որ չեն էլ հաշվել, հանձնեցին ու գնացին: [4]

Հեղինակը իր պիեսում օգտագործել է որոշ հատվածներ Հրանտ Հրահանի «Խոտում են անմահները» վեպից՝ ավելացնելով նոր մտահղացումներ ու ստեղծելով միանգամայն նոր դիպաշար: Ներքին լարվածությունն ու դրամատիկական շիկացումը պահպանվում են ամբողջ պատումի ընթացքում, սակայն այն ոչ թե ողբ է, այլ ապրելու ու հարատևելու տենչ: Որպես կենտրոնական դեմք ընտրելով Ռուբեն Սևակին, հեղինակը ներկայացնում է հայ մտավորականության անկոտրում կամքն ու անդավաճան նվիրվածությունը դավաճանքին ու արյան կանչին: Սևակը հրաժարվում է թուրք փաշայի աղջկա կյանքը փրկելու դիմաց տրված ազատությունից՝ քանզի մեկն էր այն հայ նվիրյալներից, ով պատրաստ էր զոհել կյանքը, բայց ոչ խղճի ազատությունը: «Թող այլևս չապրեն, միայն թե զոհն ապրածս կյանքը իմաստ ունենա»: «ԳԱՂԱՓԱՐ ԿԱ, ՈՐ ՀԱԶԱՐ ԿՅԱՆՔ ԱՐԺԵ» սկզբունքն էլ դարձավ հայ մտավորականության կարճատև, բայց բովանդակալից կյանքի առաջնորդող խորհրդանշանը: Նրանց կերպարը՝ իմաստավորված անդավաճան նվիրվածությամբ ազգին ու հայրենիքին, դարձավ ուղենիշ փորձությունների երկար ճանապարհին: Այսօր էլ կենդանի են նրանք՝ իրենց վեհ գաղափարներով, անմահ քերթվածքներով ու սերունդներին ուղղորդված պատգամներով:

Պիեսում ուշագրավ է գերմանական դեսպանի ու Ռուբեն Սևակի տիկնոջ երկխոսությունը. կնոջ դերն իր վեհագույն գծերով բացահայտված է Բերտայի կերպարում.

ԴԵՍՊԱՆ - Ես ծեգ եմ հարցնում, դուք՝ արիական ցեղից սերած գտարյուն գերմանուհի, ինչպես եք համաձայնվել ամուսնանալ ասիացի մի բարբարոսի հետ... Ու

լսելով պատասխանը, առաջարկում հանել ու դեն նետել «գերմանացու հպարտությունից զուրկ» սիրտը:

ԲԵՐՏԱ - ...Պետք է կտրել ու փողոցի շներին շարտել այն սրտերը, որոնք այս պատերազմը սանձագերծեցին և աշխարհում մահ ու ավեր սփռեցին՝ իրենց արյան գերակշռությունը հռչակելու և աշխարհը ստրկացնելու միտումով: Իսկ այս անմեղ երեխայի «բարբարոս» հայրը, գիշեր-ցերեկ, հիվանդանոցից-հիվանդանոց վազելով ձեր հրահրած պատերազմի զոհերին էր փրկում մահվան ճիրաններից...

Ապա կծու հեզմանքով շարունակում՝ նա «ասիացի բարբարոսն է և մաքուր արյուն չունի, ինչպիսին քաղաքակիրթ թուրքինն է ... «Այնուամենայնիվ, ես հպարտ եմ, որ հայի կին եմ, որ իմ ամուսինը, իմ զավակների հայրը հայ է և ազգանունս «յան»-ով է ավարտվում՝ Չի-լին- կիր-յան:»[5]

Կ. Դանիելյանը արհամարհանքով ու ծաղրով է խոսում եվրոպական «արդարադատության» մասին, ով ժամանակ չունի զբաղվելու նման «մանր-մունր» հարցերով. «Առանց մի որևէ շահի նա ձեռք չի մեկնի: Կիլիկիայի ջարդերի առիթով կիսաբերան մի երկու խոսք տպեցին թերթերում ու ամեն ինչ մոռացան»: [6]

Դեռևս ժամանակին Աթուլյանը, կարևորելով հայ ժողովրդի դերը մարդկության պատմության մեջ, մտահոգվում էր, որ եվրոպական պատմությունը «հայի համար քոռացել, մեծ-մեծ ազգերի ա դուլուղ անում»:

Ահա թե որն է եվրոպական դիվանագիտության գաղափարախոսությունը. «հարկ եղած դեպքում պետք է համբուրվել մինչև իսկ սատանայի հետ... Այս պատերազմում, երբ համայն աշխարհի բախտն է որոշվում, ինչ նշանակություն ունի երկու և կես միլիոն հայությունը»:[7]

Ցավոք, պատմությունը կրկնվում է ... Մարգարեական էր մեծն Րաֆֆու այն պնդումը, որ թուրքը անկիրթ ու բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այնժամ ավելի վտանգավոր կդառնա: Այդ մասին են փաստում դարավերջին Սումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում տեղի ունեցած արյունալի դեպքերը, որոնք այս կամ այն կերպ արժարծվում են Կոմիտաս Դանիելյանի արձակում: Ինչպես գրականագետ Ս. Խանյանն է նշում. «Կոմիտաս Դանիելյանը ժամանակին ձեռք է բերել իր ձեռագիրը, որը պայմանավորված է քաղաքացիական պարտքի խոր զգացումով, երկրի ճակատագրի հանդեպ ունեցած ակտիվ դիրքորոշմամբ, լրագրողական էթիկայի պահպանմամբ, գրագիտության անհրաժեշտ մակարդակով»:[8]

Արցախյան պատերազմը բեկումնային դարձավ գրողի միտումներում. Սումգայիթյան ջարդերը ամենևին էլ սովորական կամ հերթական խժժություններ չէին, ինչպես ժամանակին փորձում էին ներկայացնել գորբաչովյան մամուլն ու խորհրդային մյուս լրատվամիջոցները, «այլև ունեին խոր արմատներ, որոնց անտես թելերը հասնում են մինչև 1915 թվականը»:

Վալերափաստերի գեղագրում է Դանիելյանի «Արցախը՝ չսանձած մեծույգ» վեպը՝ կազմված անմիջական կենսափորձի վրա հիմնված օրագրային գրառումներից՝ առանց կողմնակի, ավելորդ կառուցումների, հոգեբանական վերլուծությունների. այն, թերևս, Շարժման ամենաստույգ ու իրական պատկերն է, և ինչպես Հայկ Խաչատրյանն է նշում, պետք է դուրս բերվի միջազգային ընթացատրահ, «որպեսզի համաշխարհային հասարակությունը հատուկ պատկերացում կազմի, թե իրենից ինչ է ներկայացնում Արցախի հիմնահարցը, թե արցախահայությունն ինչի համար է մտել տևական Ավարայրի մեջ»: Կ. Դանիելյանի արձակում գաղափարական հագեցվածությամբ առանձնանում են «Ճիչ», «Արմենոլ», «Կատաղած շներ», «Մղձավանջ», «Հայոց պատմություն», «Ծա-

դիկներ Համշենից» և այլ պատմվածքներ, որոնցում խլված տան, «փեշքեշ» տված Հայրենիքի ողբն է: Թեև հեղինակը ձեռնպահ է մնացել հայերի հրեշավոր ջարդերը նկարագրելուց, սակայն դրանց անդրադարձումները հստակորեն երևում են նախճի-րից հրաշքով փրկվածների ծանր ապրումների մեջ: Ահա մի սրտաճմլիկ հատված «Մղձավանջ» պատմվածքից. «Դանիելը Սումգայիթում էր ապրում: Երբ 88-ի փետր-վարին թուրքերը մտել էին իրենց շքամուտքը, նա իր ձեռքով տասնյոթամյա դստերը հինգերորդ հարկից ցած էր նետել, որպեսզի գազազած ամբոխի ճանկը չընկներ: Մինչ այդ կնոջը փողոցում բռնել, հոշոտել էին: Բայց ինչպես է պատահել, թուրքերն իրենց հարկաբաժին չբարձրացան, և խեղճ Դանիելը խելքը թռցրեց»:

Գրողն այն ճշմարիտ կարծիքն է արտահայտում, որ «սումգայիթը» հերթական օ-ղակն է հայերի ցեղասպանություն կոչվող շղթայի, որը կյանքի է կոչվել արյունռուչտ սուլթան Համիդի կողմից, հերթով փոխանցվել երիտթուրքերին, քեմալականներին ու մուսաֆաթականներին, ապա հանձնվել ալիյան «կոմունիստական» կլանին:

Վերոհիշյալ ստեղծագործությունները ընթերցողին են փոխանցում հեղինակի ընդվզումի զգացումը՝ այլազգիներին իրենց բնօրրանից տեղահանելու և բնաջնջելու ոճիորը նյութած ու այն այսօր ուրացող հանցագործների դեմ: Դա, ինչու չէ, միաժամա-նակ համախմբման, զգոնության հիշեցման կոչ է՝ ուղղված համայն աշխարհին. չէ՞ որ չարիքների հանդեպ հանդուրժողականությունն ու անտարբերությունը բերում են նոր չարագործությունների սանձազերծում, ինչն այսօր ահագնորեն մոլեգնում է սիրիական և իրաքյան տարածքներում:

«Ուրեմն, վառողը միշտ պիտի չոր պահել: Այժմ և ընդմիշտ: Ինչու այսպես, որով-հետև գիտենք, թե ովքեր են մեր հարևանները».[9]-ահա հեղինակի ամփոփիչ ընդհան-րացումը:

## **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Դանիելյան Կ., «Մենք մեր սարերն ենք», Եր., 2012, էջ 8:
2. Գրիգորյան Հ., «Արցախյան նժույգի հեծյալը», Եր., 2012, էջ 106:
3. Դանիելյան Կ.նշվ. աշխ., էջ 36:
4. Նույն տեղում, էջ 12:
5. Նույն տեղում, էջ 24:
6. Նույն տեղը, էջ 25:
7. Նույն տեղը, էջ 46:
8. Խանյան Ս., Ընտիր երկեր, հ. 6, 2010, Ստ., էջ 271:
9. Դանիելյան Կ., Պորտալար, 2007, Եր., էջ 11:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատմության ու գրականության զուգորդումը  
Կոմիտաս Դանիելյանի ստեղծագործության մեջ  
Գայանե Լալայան

«Պատմության ու գրականության զուգորդումը Կոմիտաս Դանիելյանի ստեղծագործության մեջ» հոդվածում ներկայացված է տաղանդավոր արձակագրի անդրադարձը Ցեղասպանությանը: Հեղինակը ընթերցողին է փոխանցում ընդվզումի զգացումը՝ այլազգիներին իրենց բնօրրանից տեղահանելու և բնաջնջելու ոճիրը նյութած ու այն այսօր ուրացող հանցագործների դեմ: Այն միաժամանակ համախմբման, զգոնության կոչ է՝ ուղղված համայն աշխարհին, քանզի չարիքների հանդեպ հանդուրժողականությունն ու անտարբերությունը բերում են նոր չարագործությունների սանձազերծում, ինչն այսօր ահագնորեն մոլեգնում է սիրիական և իրաքյան տարածքներում:

РЕЗЮМЕ

Сочетание истории и литературы в творчестве Комитаса Даниеляна  
Гаяне Лалаян

**Ключевые слова:** *Геноцид, интеллигенция, турок, врач, пьеса, заключенный, посол, правосудие, Движение, свобода.*

В статье представлено обращение талантливого прозаика к теме геноцида. Автор передает читателю чувства негодования против тех, которые приговорили к выселению чужеземцев из своей родины и их истреблению, кто отрекается от содеянных преступлений. Это в тоже время призыв к объединению и бдительности всему миру, так как терпимость и равнодушие, приводят к новым злодеяниям, чьи отголоски сегодня отзываются в Сирии и Ираке.

SUMMARY

The Association of History and Literature in the Works of Komitas Danielyan  
Gayane Lalayan

**Keywords:** *Genocide, intelligent, a Turk, doctor, a play, deportee, ambassador, justice, movement, freedom.*

The article presents the way a talented writer treats the issue of the Genocide. The author conveys a sense of outrage against those who sentenced foreigners to eviction from their homeland and their further extermination, and who renounced the committed crimes. At the same time it is the call for unity and vigilance to the whole world, as tolerance and indifference lead to new atrocities whose echoes speak today in Syria and Iraq.